ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2025թ. մարտի 14-ի թիվ 13 -Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ. Խ. Վարդանյան/

2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ. Մ. Մեսրոպյան/

3. Գյուլագարակ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:
/Զեկ. Ս. Նալբանդյան/

4. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 129-ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ. Ս. Նալբանդյան/

5. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
/Զեկ. Ռ. Օհանյան/

6. Վարձակալության իրավունքով տրամադրված 06-062-0108-0004 ծածկագրով հողամասը վարձակալին ուղղակի վաճառքով վաճառելու մասին:
/Զեկ. Լ. Թորոսյան/

7. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու մասին:
/Զեկ. Լ. Թորոսյան/

8. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:
/ԶԵԿ. Ս. Նալբանդյան/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԳԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N 13 -Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2025թ. մարտի 14-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N 14 -Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու

2025թ. մարտի 14-ի թիվ 14-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 09-01-01 նախադպրոցական կրթություն Գյուլագարակ ՀՈԱԿ նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդվածում ավելացնել 1 153 542 /մեկ միլիոն հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր քառասուներկու / ՀՀդրամ :
2. 09-01-01 նախադպրոցական կրթություն Վարդաբլուր ՀՈԱԿ նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդվածում ավելացնել 842 614 /ութ հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր տասնչորս /ՀՀդրամ :
3. 09-01-01 նախադպրոցական կրթություն Կուրթան մանկապարտեզ ՀՈԱԿ նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդվածում ավելացնել 1 286 128 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունվեց հազար հարյուր քսանութ/ ՀՀ դրամ:
4. 09-01-01 նախադպրոցական կրթություն Հոբարձի մանկապարտեզ ՀՈԱԿ նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդվածում ավելացնել 810 764 /ութ հարյուր տասը հազար յոթ հարյուր վաթսունչորս /ՀՀ դրամ:
5. 09-01-01 նախադպրոցական կրթություն Ամրակից մանկապարտեզ ՀՈԱԿ նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդվածում ավելացնել 660 114 /վեց հարյուր վաթսունվեց հազար հարյուր տասնվեց /ՀՀ դրամ:
6. 09-01-01 նախադպրոցական կրթություն Գարգառ մանկապարտեզ ՀՈԱԿ նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդվածում ավելացնել 841 814 /ութ հարյուր քառասունմեկ հազար ութ հարյուր տասնչորս/ ՀՀ դրամ:
7. 09-05-01 արտադպրոցական դաստիարկություն նախահաշվի 4111 աշխատավարձեր հոդվածից 1 497 015 /մեկ միլիոն չորս հարյուր ինսունյոթ հազար տասնհինգ /ՀՀ դրամ տեղափոխել 4112 պարգևատրումներ հոդված :
8. 04-05-01 ճանապարհային տնտեսություն նախահաշվի 5112 շենքեր և շինությունների շինարարություն հոդվածից պակասեցնել 5 000 000 /հինգ միլիոն / ՀՀ դրամ :
9. 01-06-01 ընդհանուր բնույթի ծառայություններ նախահաշվի 5129 այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածում ավելացնել 5 000 000 /հինգ միլիոն /ՀՀ դրամ:
10. 01-01-01 ապարատի 4823 պարտադիր վճարներ հոդվածից 300 000 /երեք հարյուր հազար /ՀՀ դրամ պակասեցնել:
11. 04-02-01 Գյուղատնտեսություն նախահաշվի 4269 հատուկ նպատակային նյութեր հոդվածում ավելացնել 300 300 /երեք հարյուր հասար/ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N 15-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Արդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված N 1

Գյուլագարակ համայնքի ավագանու

« 14» մարտի 2025- թվականի

N 15-Լ որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Գյուլագարակ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Գյուլագարակ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:

3.Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:

4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):

5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:

6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:

7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.

9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում են ՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով << ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.

19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

Հավելված N 2

Գյուլագարակ համայնքի ավագանու

« 14» մարտի 2025- թվականի

N 15-Լ որոշման

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ

N Հ/հ	Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազ-մում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Իրազեկումը ներկայացնելու ձևը	Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները	Հավաքի տեսակը	Հավաքի վայրը	Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը	Հավաքի նպատակը	Մասնակիցների սպասվող թիվը	Երթի ուղին և ժամանակացույցը	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2										
3										
4										
5										

Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ

Ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում	Ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման	Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը,	Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը,	Լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը

փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը			գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	ամիսը, տարեթիվը, ժամը		
12	13	14	15	16	17	18	19

Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ

Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվե՞լ է դատական կարգով	Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը
20	21	22	23	24	25	26	27

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝ _____ _____ էջից:
(թվով) (տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _____:
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝ _____

Կ.Տ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուլագարակ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.

Նախագիծը կրում է ներքին **(լոկալ)** բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N 16 -Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 129-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով , Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀօրենքի 33-րդ հոդվածի 1-ինմասի 1-ինկետը ,որոշում եմ.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 17.12.2024թ. թիվ 129-Ա որոշման հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Արդա		—	—	-
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2025թ. մարտի 14-ի N16-Ա որոշման
«Հավելված
Գյուլագարակ համայնքի ավագանու
2024թ. դեկտեմբերի 17-ի N 129-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 49 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	528 000		528 000
2.	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	357 000		357 000
3.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	346 500		346 500
	Ընդամենը	3			1 231 500
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
4	Համայնքի ղեկավարի օգնական	1	241 500		241 500
5	Խմբակցության փորձագետ	1	126 500		126 500
	Ընդամենը	2			368 000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
6.	Կուրթան բնակավայրի վարչական ղեկավար	1	277200		277 200
7.	Վարդաբլուր բնակավայրի վարչական ղեկավար	1	277 200		277 200
8.	Գարգառ բնակավայրի վարչական ղեկավար	1	277 200		277 200
9.	Հոբարծի բնակավայրի վարչական ղեկավար	1	237 600		237 600
10.	Պուշկինո բնակավայրի վարչական ղեկավար	1	237 600		237 600

11.	Ամրակից բնակավայրի վարչական ղեկավար	1	237 600		237 600
	Ընդամենը	6			1 544 400
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
12.	Աշխատակազմի քարտուղար	1	310 000		310 000
	Ընդամենը	1			310 000
	Աշխատակազմ				
14.	Գլխավոր մասնագետ	1	305 000		305 000
15.	Առաջատար մասնագետ	5	184 000		920000
16.	Առաջին կարգի մասնագետ	4	172 500		690 000
17.	Երկրորդ կարգի մասնագետ	10	144000		1 440 000
	Ընդամենը	20			3 355 000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
18.	Գործավար	1	175 000		175000
19.	Տնտեսվար	1	126 500		126 500
20	Խմբակցության գործավար	2	119 600		239 200
21.	Էլեկտրիկ	0,4	138 000		55 200
22.	Վարորդ	1	143 750		143 750
23.	Վարորդ	1	138 000		138 000
24.	Հավաքարար	4,375	126 500		553 437
	ԸՆԴԱՄԵՆԸ	10,775			1 431 087
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
24.	Գյուղատնտես/սեզոնային/	1	119 600		119 600
25.	Անասնաբույժ	2.5	119 600		299 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	3,5			418600
	Ընդամենը	46,275			8 658 587

»:

Աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N 17-Ն

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ ***Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Գյուլագարակ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Գյուլագարակ համայնքի 2025 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արփյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա		—	—	բացակա
Սարգսյան Ալիկ		—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N18-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-062-0108-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զավեն Արմենակի Սոֆյանի դիմումը, գրանցամատյան թիվ 3518 համայնքային սեփականությանը պատկանող հողային տարածքի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 17102023-06-0017 վկայականը կազմված 2023 թվականի հոկտեմբերի 17-ին,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 2347-Ն որոշումը , ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ՝ ավագանին որոշում է՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղում գտնվող՝ Զավեն Սոֆյանին վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրված հողամասը, ՀՀ կառավարության 08,05,2003թ թիվ 582-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես Գյուղատնտեսական խոտհարք 06-062-0108-0004 ծածկագրով, որը մասնավորեցման ենթակա հողամաս է, ընդգրկված չէ ՀՀ Հողայի օրոնսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ուստի առաջնորդվելով վերը նշված օրենքներով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության 06-062-0108-0004 ծածկագրի 0.04477 հա հողամասը 30000/երեսուն հազար / ՀՀ դրամ, ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Զավեն Սոֆյանին:
2.Զավեն Սոֆյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու առուվաճառքի պայմանագիր:
3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (+)	Դեմ (-)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		-	-	-
Օհանյան Ռուսլան		-	-	-
Սարգսյան Աիդա		-	-	-
Նալբանդյան Նարեկ		-	-	-
Մուրադյան Դավիթ		-	-	-
Պառավյան Գոհար		-	-	-
Այվազյան Սերյոժա		-	-	-
Գրիգորյան Արսեն		-	-	-
Այվազյան Վրույր	-	-	-	բացակա
Գևորգյան Համլետ	-	-	-	բացակա
Քալաշյան Վարսենիկ	-	-	-	բացակա
Արոյան Տիգրան	-	-	-	բացակա
Տոնոյան Արփյոմ	-	-	-	բացակա
Գրիգորյան Թամարա	-	-	-	բացակա
Սարգսյան Ալիկ	-	-	-	բացակա-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ վաճառքով օտարելուն

1) 1/մեկ/ լոտով 0,06499 հա հողամասը, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-027-0161-0002, մեկնարկային գինը 50000 /հիսուն հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Սիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	
Այվազյան Վրույր	—	—	—	
Գևորգյան Համլետ	—	—	—	
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	
Արոյան Տիգրան	—	—	—	
Տոնոյան Արտյոմ	—	—	—	
Գրիգորյան Թամարա	—	—	—	
Սարգսյան Ալիկ	—	—	—	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025 թվականի N20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել 2025 թվականի ապրիլի 15 - ին: ժամը՝ 10:00
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/